



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ ՈՒ Ն
18 հուլիսի 2019 թվականի N 183-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ, ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N1510-Ն որոշմամբ հաստատված կարգի 52-54 կետերով, հիմք ընդունելով մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարձրագույն, գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների 2019 թվականի առաջին կիսամյակի կատարողականի գնահատման դրական արդյունքները՝

Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ Մ ԵՄ.

1. 2019 թվականի առաջին կիսամյակի արդյունքների հիման վրա, պարգևատրման մեկ միավորի նկատմամբ համապատասխան տոկոսային արտահայտությամբ խրախուսել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի քաղաքացիական ծառայության բարձրագույն, գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով ապահովել պարգևատրման վճարումը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

18.07.2019

X

ՀՈՐՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

